# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀԿԳՆԾՁԲ-14/ 064

ք. Երևան «18» «12» 2014 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Մ. Ղազարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և <<Էդիթ Պրինտ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Ա. Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել <<Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները ավագ խմբում>> ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրման ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գնման ժամանակացույցի և N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրի պահանջների:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել պայմանագրի N 1 և N 2 հավելվածներին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 4800000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության

յտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան բսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | <<Էդիթ Պրինտ>> ՍՊԸ |
| ք.Երևան, Կառավարական տուն 3 | ք. Երևան, Թումանյան 12 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Պրոմեթեյ բանկ |
| Հ/Հ 900011005122 | Հ/Հ 1660000243060100 |
| ՀՎՀՀ 02512868 | ՀՎՀՀ 00009253 |
| Նախարարության աշխատակազմի ղեկավար | Տնօրեն՝ |
| _________________ Մ. Ղազարյան | _________________ Ա. Գալստյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված 1
<<18>> <<12>> 2014թ կնքված
ՀՀԿԳՆԾՁԲ-14/064 գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Գնման առարկա է հանդիսանում <<Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները ավագ խմբում>>ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրման ծառայությունը /այսուհետ՝ Ծառայություն/**

| | |
|---|---|
| Չափսը՝ | 70 x 100 1/16, 10 մամուլ, |
| Թուղթը՝ | օֆսեթ, 70 գր.մ², |
| Կազմը՝ | փափուկ, թելակար, ջերմասոսնձված, գունավոր տպագրությամբ (4 գույն), |
| Կազմի թուղթը՝ | կազմի ստվարաթուղթ (միակողմանի կավճապատ) 200-ից 250 գր.մ²: |

Ելքային տեղեկությունները -- Հայաստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված <<Հրատարակություն, ելքային տեղեկություններ>> ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում -- Կազմի վրա, տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:

Փոխադրումը և բեռնաթափումը -- Կատարողի կողմից, համաձայն կից բաշխման ցուցակի:

**Պատվիրատու՝**

Մ. Ղազարյան

**Կատարող՝**

Ա. Գալստյան

<<Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները ավագ խմբում>>

ուսումնամեթոդական ձեռնարկի

# ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

| N | Ձեռնարկի անվանումը | Երևան | Արարատ | Արագածոտն | Արմավիր | Գեղարքունիք | Կոտայք | Լոռի | Շիրակ | Տավուշ | Սյունիք | Վայոց ձոր | Նախ-ներ. ըստ ցանկի | <<Քայլ առ քայլ>> ՀԿ | ԼՂՀ | ԿԳՆ ԼԳ | << ԿԱԻ >> | << ԿԳՆ ԴԵԻ կրթական ազգ. ինստ. | Հեղինակային խմբին | ԿԳՆ ԾԻԳ պատասխանատուին | Կրթահամալիրների մեթոդմիավորումներին | Ազգային գր. | ՀՊՄՀ գրադարան | << Ազգային գրքերի պալատ >> | ՄՆ դաս-ն | ԿԳՆ պատվիրատուին | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | <<Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները ավագ խմբում>> ուսումնամեթոդական ձեռնարկ | 520 | 160 | 60 | 130 | 110 | 170 | 160 | 120 | 100 | 120 | 30 | 534 | 60 | 140 | 4 | 4 | 30 | 4 | 2 | 14 | 2 | 2 | 6 | 3 | 15 | 2500 |

**Պատվիրատու՝**

________________ Մ. Ղազարյան

**Կատարող՝**

________________ Ա. Գալստյան

**Հավելված 2**
<<18>> <<12>> 2014թ. կնքված
N ՀՀԿԳՆԾՁԲ-14/064 գնման պայմանագրի

## Գնման ժամանակացույց

| Չափաբաժին | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը, հազ.դրամ | Ենթակա է գնման 2014թ | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 4-րդ եռամսյակ /դեկտեմբերի 20-ը/ | | | |
| | | | | քանակը | գումարը, հազ.դրամ | քանակը | գումարը, հազ.դրամ |
| 1 | 2 | 3 | 4 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | <<Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները ավագ խմբում>> ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրման ծառայություններ | հատ | 1.92 | 2500 | 4800.0 | 2500 | 4800.0 |
| Ընդամենը | | | | | | | **4800.0** |

**Պատվիրատու**
Մ. Ղազարյան

**Կատարող**
Ա. Գալստյան

**Հավելված 3**
<< 18 >> << 12 >> 2014թ. կնքված
N ՀՀԿԳՆԾՁԲ-14/064 գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ.դրամ

| Գնման առարկայի անվանումը | Հոդված | Ենթակա է վճարման ՀՀ 2014թ պետական բյուջեի <<Ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուս. ծրագրերի, մանկավարժ. պարբ. և ուսումնադիտող. պարագաների ձեռքբերում>> ծրագրից՝ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25-ը | |
| Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն, այդ թվում՝ <<Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները ավագ խմբում>> ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրման ծառայություններ | 4263 | | | | 4800.0 | 4800.0 |

**Պատվիրատու**
Մ. Ղազարյան

**Կատարող**
Ա. Գալստյան